Լ. ՖՐԵՆՔ ԲԱՈՒՄ

ՕԶԻ ԿԱԽԱՐԴԸ

Վերապատումը՝ Ռոն Ռանդալի

Նկարազարդումը՝ Լիզ Մոնահենի

Անգլերենից թարգմանությունը՝ Ալվարդ Ջիվանյանի

ՀՈՂՄԸ

Դորոթին ապրում էր Կանզասի շոգ տափաստանում՝ մորաքրոջ՝ Էմի և նրա ամուսնու՝ Հենրիի ագարակում: Մորաքույրն ու ամուսինը օրնիբուն աշխատում էին: Երկուսի մաշկն էլ գորշ էր ու արևակեզ, ինչպես տափաստանի խարկած հողն ու խոտը: Ամուսինները դեպքից դեպք էին ժպտում և երբեք չէին ծիծաղում: Իսկ այ Դորոթին շատ ծիծաղկոտ երեխա էր. ամենից շատ նրան ծիծաղեցնում էր Տոտո շնիկը՝ մետաքսանման սև բրդով և սևորակ, ժպտուն աչքերով մի արարած: Դորոթին շատ էր կապված նրա հետ, և ամբողջ օրը միասին խաղում էին՝ աղջիկն ու շունը:

Այդ օրը փոթորիկ էր լինելու, փոթորիկ, որ պտտահողմ էր կոչվում, և Դորոթին, մորաքույրն ու ամուսինը շտապում էին մտնել հողմից պատսպարվելու համար նախատեսված նկուղը. այնտեղ ապահով էր:

Տոտոն շատ անհանգիստ էր, և երբ Դորոթին աստիճաններով նկուղ էր իջնում, շունը վայր թռավ նրա գրկից, որ թաքնվի: Աղջիկը վազեց շան հետևից:

- Դո՛րոթի, - բղավեց մորաքույր Էմը՝ նկուղի դռնակը բաց պահելով, - արագ ե՛կ այստեղ:

Դորոթին գրկեց Տոտոյին ու փորձեց մտնել նկուղ, բայց հանկարծ ամբողջ տունն սկսեց դողալ ու ցնցվել, և նա վայր ընկավ: Հետո զարմանալի բան կատարվեց, թվաց՝ տունը օդ բարձրացավ ու սկսեց պտտվել: Դորոթին իրեն չկորցրեց և շանը կրծքին ամուր սեղմելով՝ փակեց աչքերը: Քիչ հետո, չնայած քամու սուլոցին ու տան պտտվելուն, նա քուն մտավ:



ՄԱՆՉԿԻՆՆԵՐԸ

Ուժեղ ցնցումից Դորոթին արթնացավ: Երբ պատուհանից դուրս նայեց, աչքերին հազիվ հավատաց: Պատուհանից դուրս Կանզասը չէր: Փոթորկից հետո տունը վայրէջք էր կատարել կանաչ, ծաղկաշատ ու մրգատու ծառերով հարուստ մի հրաշալի վայրում: Չորս մարդուկներ գալիս էին իր կողմը:

- Մենք՝ մանչկիններս, ողջունում ենք քեզ մեր երկրում և երախտապարտ ենք, որ սպանեցիր մեր թշնամուն՝ Արևելքի չար վհուկին:

- Բայց ես ոչ ոքի չեմ սպանել, - զարմացավ Դորոթին:

- Դու՝ ոչ, բայց քո տնակն է սպանել, - ասաց ինչ-որ կին:

Եվ իսկապես, տնակն ինչ-որ մեկին տակն էր գցել, և այդ մեկի ոտքերը՝ հագին արծաթե մաշիկներ, տնակի տակից ցցվել էին:

- Ես Հյուսիսի բարի կախարդուհին եմ, - ասաց կինը, - Արևելքի չար վհուկն իմ ժողովրդին ստրկացրել էր, բայց դու եկար ու փրկեցիր մեզ:

- Որպես պարգև՝ դու կստանաս վհուկի արծաթե մաշիկները, - ասաց մանչկիններից մեկը, - ասում են՝ կախարդական են, թեև ոչ ոքի հայտնի չէ՝ ինչպես դրանցից օգտվել:

Բարի կախարդուհին բացատրեց Դորոթիին, որ նա Օզ երկրում է, և որ դեռ կենդանի է մնում մեկ այլ չար կախարդ՝ Արևմուտքի վհուկը:

- Եթե մնաս մեզ հետ, միանգամայն ապահով կլինես, - ասաց Բարի կախարդուհին:

Դորոթին հուզվեց ու լաց եղավ.

- Ես ձեզ շատ շնորհակալ եմ, բայց ուզում եմ տուն՝ Կանզաս վերադառնալ՝ մորաքրոջս և նրա ամուսնու մոտ, - ասաց նա՝ շնիկին ամուր գրկելով, - նրանք շատ կանհանգստանան ինձ համար:

- Գուցե Մեծն Օ՞զը օգնի քեզ, - ասաց Բարի կախարդուհին, - նա ամենահզորն է կախարդներից և ապրում է Զմրուխտե քաղաքում:

- Իսկ որտե՞ղ է Զմրուխտե քաղաքը, - հարցրեց Դորոթին:

- Այն հեռու է՝ մեր երկրի ուղիղ կենտրոնում: Դեղին աղյուսե ճանապարհը քեզ կհասցնի այնտեղ: Իսկ հիմա ե՛կ համբուրեմ քեզ, որ ապահով լինես ամեն փորձանքից:

ԴՈՐՈԹԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԽՐՏՎԻԼԱԿԻՆ

Երբ մանչկիններն ու Բարի կախարդուհին հեռացան, Դորոթին իր տնակը մտավ՝ սպասվող ճամփորդության համար մի քիչ ուտելիք վերցնելու: Նա նաև զգեստը փոխեց, հետո հագավ սպանված վհուկի արծաթե մաշիկները:

Դորոթին առանց դժվարության գտավ Դեղին աղյուսե ճանապարհը: Մանչկիններից շատերը տներից դուրս եկան՝ աղջկան ողջունելու: Բոլորը գիտեին, որ Դորոթին է իրենց փրկել Չար վհուկից: Մանչկիններից մեկը Դորոթիին հրավիրեց իր տուն՝ ընթրելու և հանգիստ գիշերելու:

Հաջորդ օրը, երբ Դորոթին ու Տոտոն քայլում էին Դեղին աղյուսե ճանապարհով, եգիպտացորենի դաշտի մեջտեղում մի հին խրտվիլակ տեսան: Դորոթիին հանկարծ թվաց՝ Խրտվիլակն իրեն աչքով է անում: Այո, այդպես էլ կար: Իսկ հետո այն նույնիսկ խոսեց.

- Բարի՛ օր, - ասաց, - խնդրում եմ՝ այս փայտը մեջքիցս հանես:

- Դու կարող ես խոսե՞լ, - զարմացած հարցրեց Դորոթին, ապա մոտեցավ ու Խրտվիլակին ազատեց փայտից, որին նա գամված էր:

- Շնորհակալ եմ, - ասաց Խրտվիլակը, - իսկ հիմա ասեք՝ ո՞վ եք ե ո՞ւր եք գնում:

Երբ Խրտվիլակն իմացավ, որ աղջիկն ու շունը ուղևորվում են Զմրուխտե քաղաք՝ Մեծն Օզի մոտ, խնդրեց, որ իրեն էլ տանեն:

- Գուցե Կախարդն ինձ խելք տա. գլուխս հարդ է լցրած: Դեմ չէի մի քիչ խելք ունենալուն, որ մարդիկ չասեն՝ հիմար եմ:

- Իհարկե, դու էլ արի մեզ հետ, - համաձայնեց Դորոթին, և երեքով շարունակեցին քայլել Դեղին աղյուսե ճանապարհով:



ԱՆՏԱՌԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Շուտով ճանապարհը դարձավ խորդուբորդ, աղյուսները տեղ-տեղ պոկվել էին, ու փոսեր էին գոյացել: Գյուղերը գնալով ավելի խղճուկ դարձան, տները՝ միայնակ, ծառերը՝ ավելի ցանցառ: Որքան առաջ էին շարժվում, այնքան շուրջն ավելի անհրապույր էր դառնում: Ճաշին Դորոթին Խրտվիլակին մի կտոր հաց առաջարկեց:

- Ո՛չ, շնորհակալ եմ, - հրաժարվեց Խրտվիլակը, - ես երբեք չեմ սովածանում, բացի այդ՝ բերանս իսկական չէ, այլ նկարված:

Խրտվիլակն ուզում էր ամեն բան իմանալ Դորոթիի մասին: Աղջիկը պատմեց նրան Կանզասի, մորաքրոջ ընտանիքի մասին, նաև այն մասին, թե ինչպես էր նրանց կարոտում, չնայած Կանզասում կյանքը տխուր էր ու ձանձրալի:

Խրտվիլակն էլ իր մասին պատմեց: Նրան մի գյուղացի էր սարքել ընդամենը մի քանի օր առաջ և կարծես այնքան էլ գոհ չէր մնացել արդյունքից:

- Սկզբում ագռավները վախենում էին ինձնից, - ասաց նա, - հետո մի ծեր ագռավ թառեց ուսիս ու երբ տեսավ, որ իրեն վնասելու միտք չունեմ, վեր թռավ և սկսեց ցորենը կտցել: Հետո թռան եկան ուրիշ ագռավներ: Հիմա հասկանո՞ւմ ես՝ ինչիս է պետք խելքը: Այսպես անխելք ես ոչ ոքի պետք չեմ:

Դորոթին խղճաց Խրտվիլակին: Գոնե Կախարդը կարողանար օգնել նրան:

Իրիկնադեմին մոտեցան մի մեծ ու մութ անտառի:

- Եթե ճանապարհն անտառ է տանում, ուրեմն նաև անտառից դուրս է բերում, - որոշեց Խրտվիլակը, և նրանք շարունակեցին քայլել: Շուտով տեսան մի փոքրիկ, դատարկ տուն: Այնքան հոգնած էին, որ որոշեցին ներս մտնել ու հանգստանալ: Դորոթին ու Տոտոն կուչ եկան մի տեղ և շուտով խոր քուն մտան:



ԹԻԹԵՂՅԱ ՓԱՅՏԱՀԱՏԸ

Հաջորդ օրը՝ նախաճաշելուց հետո, նորից ճանապարհ ընկան: Դեռ շատ չէին գնացել, երբ հանկարծ տնքոց լսեցին: Ծառերի արանքից երևաց կացինը ձեռքին մի մարդ՝ մարմինն ամբողջությամբ թիթեղից: Դորոթին ու Խրտվիլակը զարմանքից քար կտրեցին: Տոտոն սկսեց միալար հաչել:

- Մի ամբողջ տարի է՝ այս վիճակում եմ, բայց ոչ ոք ինձ չի լսում, - կերկերուն ձայնով տրտնջաց Թիթեղյա փայտահատը:

- Ինչպե՞ս Ձեզ օգնենք, - հարցրեց Դորոթին:

- Հոդերս ամբողջովին ժանգոտել են. անկարող եմ շարժվել, - պատասխանեց նա, - այնտեղ՝ խրճիթում, յուղման կա:

Դորոթին շտապ բերեց յուղմանն ու մի լավ յուղեց Թիթեղյա փայտահատի ժանգոտած հոդերը, որ նա կրկին կարողանա շարժվել: Երբ փայտահատն իմացավ՝ մեր ճանապարհորդներն ուր են գնում, որոշեց ինքն էլ ընկերանալ նրանց:

- Կախարդին կխնդրեմ, որ ինձ սիրտ տա, - ասաց նա, - ժամանակին ինքն էլ իսկական մարդ էր և սիրահարվել էր մանչկիններից մեկին: Աղջկա մայրը դեմ էր նրանց միությանն ու խնդրել էր Արևելքի չար վհուկին խեղճի մարմինը թիթեղ դարձնել ու սիրտը հանել:

- Երբ սիրում էի, աշխարհիս ամենաերջանիկ մարդն էի, - ասաց Թիթեղյա փայտահատը, - հենց նոր սիրտ ունենամ, կրկին երջանիկ կլինեմ:

- Դորոթին ու Խրտվիլակն ուրախ էին, որ Թիթեղյա մարդն իրենց հետ է գալու: Եվ նրանք չորսով քայլեցին դեպի Զմրուխտե քաղաքը:



ԵՐԿՉՈՏ ԱՌՅՈՒԾԸ

Ճանապարհը ծածկված էր չորացած ճյուղերով ու մեռած տերևներով: Քայլելը գնալով դժվարանում էր: Ժամանակ առ ժամանակ գազանների ձայներ էին լսվում: Աղջկա սիրտը վախից կծկվում էր, իսկ Տոտոն ամուր սեղմվում էր տիրուհուն:

Հանկարծ ծառերի հետևից սարսափելի մռնչոց լսվեց, և ճանապարհին երևաց մի հսկա առյուծ: Թաթի ուժեղ հարվածով նա մի կողմ նետեց Խրտվիլակին, ևս մեկ հարվածով գետին տապալեց Փայտահատին: Իսկ երբ Տոտոն, բարձր հաչելով, նետվեց առյուծի վրա, սա բերանը բացեց, որ կծի շանը:

- Չհամարձակվես շանս ձեռք տալ, - գոչեց Դորոթին՝ հարվածելով առյուծի մռութին, - ինչպես չես ամաչում, հարձակվում ես փոքրիկ շան վրա, իսկ ինքդ մեծամարմին վախկոտի մեկն ես:

Առյուծն ամոթից գլուխն իջեցրեց.

- Իրավացի ես, ես գիտեմ՝ երբ մռնչում եմ, բոլորը վախենում են, բայց ես ինքս եմ իմ մռնչոցից վախենում: Եթե մեկը սիրտ անի ինձ հետ կռվի բռնվել, իսկույն փախուստի կդիմեմ:

Պարզ էր, որ առյուծն իսկապես երկչոտ էր: Երբ իմացավ՝ մեր ճամփորդներն ուր են գնում, խնդրեց, որ իրեն էլ տանեն:

- Եթե Կախարդը կարող է Խրտվիլակին խելք տալ, Թիթեղյա մարդուն՝ սիրտ, գուցե ինձ էլ մի քիչ համարձակություն պարգևի:

- Արի՛ մեզ հետ, - ասաց Դորոթին, - եթե վայրի գազանները փորձեն մեզ մոտենալ, քո մռնչոցով կվախեցնես նրանց:



ՔԱԼԻԴԱՆ

Այդ գիշեր Դորոթին ու իր ընկերները մնացին անտառում: Աղջկա մոտ եղած ամբողջ հացը սպառվել էր. ընթրիքի համար ոչինչ չէր մնացել:

- Ես կարող եմ եղնիկ որսալ, և մենք համեղ միս կուլենանք, - առաջարկեց առյուծը:

Փայտահատն արգելեց առյուծին որևէ կենդանու ձեռք տալ:

- Եթե տեսնեմ՝ ինչպես է անօգնական եղնիկը տանջվում, լաց կլինեմ, - ասաց նա, - իսկ արցունքներից ծնոտիս հոդերը նորից կժանգոտեն:

Այդ ժամանակ Խրտվիլակն անտառից ընկույզ ժողովեց, և բոլորը կուշտ ընթրեցին:

Հաջորդ օրը ճանապարհորդները հասան անտառի ամենախոր ու մթին մասին:

- Այստեղ Քալիդաներն են բնակվում, - մրմնջաց առյուծը, - սարսափելի գազաններ են՝ արջի մարմնով ու վագրի գլխով, ճանկերն էլ սուր են ու երկար: Պարզապես սոսկում եմ նրանցից:

Սկսեցին ավելի զգույշ առաջանալ: Հասնելով լայն ու խոր մի ձորակի՝ ստիպված կանգ առան: Հարկավոր էր ձորակի մյուս կողմն անցնել:

- Ես գիտեմ՝ ինչ անենք, - ասաց Խրտվիլակը, - այ այնտեղ մի մեծ ծառ է աճում: Թող փայտահատը ծառը կտրի, և մենք ձորակի վրայով կամուրջ կկապենք:

Փայտահատն իսկույն գործի անցավ, և շուտով ծառը ճռռոցով տապալվեց: Կամուրջը պատրաստ էր: Դեռ նոր էին վրան բարձրացել, երբ բարձր գռմռոց լսվեց:

- Քալիդա է, - բղավեց Խրտվիլակը - շտապենք:

Բոլորն առաջ նետվեցին, Քալիդան սլացավ նրանց հետևից: Երբ արդեն ձորակի մյուս կողմում էին, Խրտվիլակը Փայտահատին խնդրեց կամուրջը քանդել:



ԹՈՒՆԱՎՈՐ ԿԱԿԱՉՆԵՐԻ ԴԱՇՏԸ

Հաջորդ առավոտյան ճանապարհորդները հասան անտառի եզրով հոսող մի լայն գետի: Դեղին աղյուսե ճանապարհը շարունակվում էր գետի մյուս ափին՝ հատելով կանաչ մարգագետինները, դաշտերն ու այգիները:

Փայտահատը մի լաստ պատրաստեց, որ տեղափոխվեն գետի մյուս ափը: Ընկերները տեղավորվեցին լաստի վրա: Բայց գետի մեջտեղում հոսանքը շատ ուժեղ էր և լաստը քշեց գետն ի վար: Այսպես գետը երբեք չէին անցնի:

- Ես լողալով կանցնեմ մյուս կողմն ու լաստը ափ կքաշեմ, - առաջարկեց առյուծը:

Երբ նորից ցամաք դուրս եկան, պարզվեց, որ հոսանքը նրանց Դեղին աղյուսե ճանապարհից հեռու է քշել: Գետափով վերադառնալիս պետք է անցնեին կարմիր կակաչների դաշտով:

- Ա՜խ, ինչ գեղեցիկ են, - ասաց Դորոթին՝ շնչելով կակաչների թունդ բույրը, և այնպես շշմեց, որ պառկեց ու տեղնուտեղը քնեց: Տիրուհու կողքին քնեց նաև Տոտոն: Մի փոքր անց քնեց Առյուծը: Փայտահատն ու Խրտվիլակը հոտառություն չունեին և մնացին արթուն:

- Պետք է դաշտից նրանց հեռու տանենք, - ասաց Փայտահատը:- Այս կակաչները թունավոր են: Նրանց հոտից մարդ ու գազան քուն են մտնում: Եթե մնան դաշտում, կքնեն հավետ:

Առյուծը շատ ծանր էր. տեղից շարժել անգամ չկարողացան, բայց Դորոթիին ու շանը ծաղիկներից հեռու տարան՝ հուսալով, որ սառն օդից կարթնանան:



ԴԱՇՏԱՄԿՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻՆ

Մինչ Դորոթիին և շանն ուշքի էին բերում, Փայտահատն ու Խրտվիլակը տեսան, թե ինչպես մի վայրի կատու ընկել էր փոքրիկ գորշ դաշտամկան հետևից: Փայտահատը խղճաց մկնիկին ու, կացնով սպառնալով, քշեց կատվին: Դաշտամուկը շատ շնորհակալ եղավ: Շուտով նրան միացան մի խումբ ուրիշ մկներ:

- Ես դաշտամկների թագուհին եմ, - ասաց մկնիկը, - դու փրկեցիր իմ կյանքը, ասա, փոխարենն ի՞նչ ես ուզում:

Փայտահատն ու Խրտվիլակը խնդրեցին, որ մկներն օգնեն իրենց փրկել կակաչների դաշտում դեռ քնած Առյուծին: Առյուծի անունը լսելուն պես մկները սարսափած ծվծվացին: Փայտահատը, սակայն, հավատացրեց նրանց, որ իրենց ընկերը երկչոտ արարած է և երբեք նրանց չէր վնասի: Մկները համաձայնեցին օգնել: Փայտահատը մի քիչ փայտ կտրեց, որ սայլակ շինի, իսկ մկները պարանի կտորներ բերեցին: Պարանի օգնությամբ Փայտահատը մկներին լծեց սայլին, ու խմբով այն կակաչների դաշտը քշեցին:

Մի կերպ առյուծին սայլը բարձրացրին: Փայտահատն ու Խրտվիլակը հրում էին, իսկ մկները քաշում էին սայլը: Առյուծին վերջապես բերեցին Դորոթիի մոտ. աղջիկն արդեն արթնացել էր:

- Շնորհակալ եմ ընկերոջս փրկելու համար, - ասաց Դորոթին:

Մկները պատասխանեցին.

- Ուրախ էինք օգնելու, եթե հարկ լինի, նորից կօգնենք:

ԴԵՊԻ ԶՄՐՈՒԽՏԵ ՔԱՂԱՔԸ

Երբ Դորոթին ու ընկերները կրկին ճամփա ընկան, նկատեցին, որ Դեղին աղյուսե ճանապարհի մոտ գտնվող բոլոր տները կանաչ էին ներկված: Մարդիկ նույնպես կանաչ էին հագել:

- Երևի մոտենում ենք Զմրուխտե քաղաքին,- ասաց Դորոթին:

Երեկոյան կողմ ճանապարհորդները, հոգնած ու սոված, որոշեցին թակել տներից մեկի դուռը: Դուռը բացեց մի կին և նրանց ներս հրավիրեց՝ իր ընտանիքի հետ ընթրելու: Որքան զարմացան նրանք, երբ իմացան, որ ընկերները գնում են Օզի կախարդի մոտ:

- Մեծն Օզը երբեք թույլ չի տալիս, որ իրեն տեսնեն, - ասաց տանտերը, - չգիտենք անգամ, թե ինչ տեսք ունի:

- Տարօրինակ է, - զարմացավ Դորոթին, - բայց մենք պետք է տեսնենք նրան, հո այս երկար ճամփան իզո՞ւր չենք անցել:

Այդ օրը մնացին գիշերելու, իսկ առավոտյան՝ կուշտ նախաճաշելուց հետո, տանտերերին շնորհակալություն հայտնեցին ու շարունակեցին ճանապարհը: Շուտով հասան Զմրուխտե քաղաքի պարիսպներին: Ոտքից գլուխ կանաչ հագած մի մարդուկ պահակ էր կանգնել:

- Մենք եկել ենք Կախարդին տեսնելու, - ասաց Դորոթին:

Մարդուկը զարմացավ:

- Չեմ հիշում, որ որևէ մեկը հանդգներ գալ Մեծն Օզին տեսնելու, - ասաց նա, - բայց քանի որ ես եմ նրա դարպասների պահապանը, ձեզ ներս կտանեմ: Նախ դրե՛ք այս ակնոցները:

Մարդուկը բոլորին կանաչ ոսպնյակներով ակնոցներ բաժանեց:

- Պետք է օր ու գիշեր կրեք դրանք, - զգուշացրեց նա, - թե չէ պայծառ լույսից կկուրանաք:



ՄԵԾՆ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՕԶԸ

Դորոթին և նրա ընկերները պահակի հետևից քայլեցին դեպի Կախարդի ապարանքը: Կախարդը համաձայնել էր ընդունել նրանց, բայց յուրաքանչյուրին՝ առանձին օր: Դորոթին առաջինը մտավ նրա մոտ: Ապարանքի պատերը, հատակն ու առաստաղը ծածկված էին շողշողուն զմրուխտներով: Կենտրոնում մարմարե կանաչ գահն էր, գահին՝ անձեռք ու անոտք մի հսկա գլուխ:

- Ես Օզն եմ, Մեծն սարսափելի Օզը, - լսվեց բամբ ձայնը: - Ո՞վ եք դուք և ինչո՞ւ եք ցանկանում ինձ տեսնել:

- Խնդրում եմ, - խոսեց Դորոթին՝ համոզվելով, որ Ձայնն իր սպասածի չափ սարսափելի չէր, - կարո՞ղ եք ինձ տուն՝ Կանզաս ուղարկել:

- Ես կօգնեմ քեզ, - ասաց Կախարդը, - փոխարենը դու էլ պետք է ինձ օգնես և սպանես Արևմուտքի Չար կախարդին:

Դորոթին լաց եղավ.

- Ես ընդամենը փոքրիկ աղջիկ եմ, ինչպե՞ս կարող եմ ինչ-որ մեկին սպանել, այն էլ՝ Չար կախարդին:

Հաջորդ օրը Խրտվիլակի հերթն էր: Այս անգամ զմրուխտե գահին գեղեցիկ տիկին էր նստած: Նա ասաց, որ եթե Խրտվիլակն ուզում է խելք ունենալ, պետք է սպանի Չար կախարդին:

Փայտահատի մտնելու օրը Օզը սարսափելի գազանի կերպարանք էր ընդունել: Փայտահատին էլ ասվեց նույնը, ինչ մյուսներին: Վերջին օրը Առյուծը մտավ պալատ: Օզն այս անգամ հայտնվեց որպես շիկացած հրե գունդ:

- Դու պետք է սպանես Արևմուտքի Չար վհուկին: Քանի դեռ նա ապրում է, դու կմնաս նույն վախկոտը, - ասաց հրե գունդը:

Առյուծը գաղափար չուներ՝ ինչպես կարող էր սպանել վհուկին, բայց սիրտ չարեց առարկել Մեծն Օզին և գլուխը կախ վերադարձավ ընկերների մոտ:



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ

Դարպասների պահապանը ճամփորդներին ցույց տվեց՝ որ կողմն է Արևմուտքը:

- Ուղղակի հետևեք, թե որտեղ է արևը մայր մտնում, - ասաց մարդուկը՝ հետ վերցնելով կանաչ ակնոցները:

Շատ շուտով Զմրուխտե քաղաքը մնաց հետևում, իսկ հինգ ընկերները բռնեցին Արևմուտք տանող խորդուբորդ ճանապարհը:

Արևմուտքի Չար կախարդը միաչքանի էր, բայց այդ միակ աչքը նման էր հեռադիտակի և հասցնում էր նկատել ամեն ինչ: Տեսնելով, որ իր տիրույթն են ներխուժել, Վհուկը սաստիկ զայրացավ ու որոշեց կործանել եկվորներին: Նախ փչելով իր վզից կախած արծաթե սուլիչը՝ կանչեց գայլերի մի ոհմակ.

- Հոշոտե՛ք օտարականներին, - հրամայեց նա:

Գայլերը հարձակվեցին, բայց Փայտահատը ժամանակին նկատեց գազաններին ու կացնով գլխատեց նրանց: Այս տեսնելով՝ Վհուկը ագռավների մի երամ ուղարկեց, որ կտցեն հանեն եկվորների աչքերը: Բայց թռչունները Խրտվիլակից վախեցան ու հետ դարձան: Կատաղած Վհուկը մեղուների մի պարս ուղարկեց, որ խայթելով սպանեն Դորոթիին ու նրա ընկերներին: Բայց մեղուներին տեսնելով՝ Խրտվիլակն ասաց Փայտահատին.

- Իմ մեջ դրած հարդից հանի՛ր, որ Դորոթիին ու Առյուծին ծածկենք:

Փայտահատն այդպես էլ արեց: Եվ երբ մեղուները մոտեցան, կարողացան խայթել միայն Փայտահատին: Նրանց կնճիթները, դիպչելով Փայտահատի թիթեղյա ամուր մարմնին, կոտրվեցին: Դորոթին ու Առյուծը հարդը նորից խցկեցին Խրտվիլակի շորերի մեջ և շարունակեցին ճանապարհը:



ԹԵՎԱՎՈՐ ԿԱՊԻԿՆԵՐԸ

Վհուկին միայն մի բան էր մնում անել, նա դրեց Ոսկե գլխարկը և կանչեց իր ամենազորեղ օգնականներին՝ թևավոր կապիկներին: Միայն երեք անգամ կարող էր նրանց կանչել, սա արդեն երրորդ անգամն էր: Երբ կապիկները տեղ հասան, Վհուկը հրամայեց.

- Բոլորի վերջը տվեք, բացի առյուծից, նրան վանդակում կփակեմ, մի բանի պետք կգա:

Կապիկներն առաջինը հասան Փայտահատին և օդ բարձրացնելով՝ ժայռերի վրա նետեցին: Խեղճը մաս-մաս եղավ: Հետո Խրտվիլակի մարմնի մեջ եղած ամբողջ հարդը դուրս թափեցին: Առյուծին նրանք թռցրին Վհուկի պալատը: Հերթը Դորոթիին հասավ: Բայց աղջկա ճակատին տեսնելով Բարի կախարդուհու համբույրի հետքը՝ չհամարձակվեցին անգամ դիպչել նրան և տարան Վհուկի մոտ:

Վհուկը, աղջկա ճակատին տեսնելով համբույրի դրոշմն ու ոտքերի արծաթե մաշիկները, ահից դողաց: Շատ շուտով, սակայն, նա հասկացավ, որ Դորոթին չգիտեր՝ ինչպես օգտվել կախարդական մաշիկներից, և որոշեց նրան իր ստրուկը դարձնել ու մի հնարով ձեռքից խլել մաշիկները:

Դորոթին օր ու գիշեր բանում էր՝ ավլում, լվանում ու սրբում: Բայց մի օր, երբ Վհուկը փորձեց նրա ոտքերից հանել մաշիկները, աղջիկը զայրացավ, շատ զայրացավ և մեծ դույլով ջուրը լցրեց Վհուկի գլխին:

- Վա՜ ինձ, վա՜յ, մահս եկել է, - սուր ճչաց Վհուկն ու տեղնուտեղը հալվեց, ջուր դարձավ:



ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Ջուրը մաքուր սրբելուց հետո Դորոթին վազեց բակ՝ առյուծին ազատելու: Ազատ արձակեցին նաև բոլոր ստրուկներին: Այդ մարդիկ վինքիներն էին՝ Չար վհուկի հողերի նախկին տերերը:

- Եթե Խրտվիլակն ու Փայտահատն էլ մեզ հետ լինեին, - ասաց Առյուծը, - ես երջանիկ կլինեի:

- Մենք կօգնենք ձեզ, - ասացին վինքիները: Նրանք փնտրեցին և գտան Փայտահատի ջարդված կտորները և դրանք զգուշորեն տեղափոխեցին վհուկի դղյակ: Վինքիների ժրաջան թիթեղագործները նորոգեցին Փայտահատի մարմինը և նրա համար ոսկուց ու արծաթից մի շողշողուն կացին ձուլեցին: Հետո գտան Խրտվիլակի շորերը և թարմ, մաքուր հարդ լցրին շորերի մեջ: Խրտվիլակն ու Փայտահատն այժմ նոփ-նոր էին:

Ժամանակն էր Զմրուխտե քաղաք վերադառնալու և Մեծն Օզին հայտնելու, որ կատարել են իրենց խոստումն ու սպանել Արևմուտքի չար վհուկին: Վինքիներն ընկերներին հաջողություն մաղթեցին և նվերներ բաժանեցին, ոսկե օձիքներ՝ Տոտոյին ու Առյուծին, արծաթե յուղաման՝ Փայտահատին, ոսկեկոթ ձեռնափայտ՝ Խրտվիլակին, շողշողուն մի ապարանջան՝ Դորոթիին:

Դորոթին Վհուկի խոհանոցից մի քիչ ուտելիք վերցրեց ճանապարհի համար:

- Ի՜նչ էլ սիրուն գլխարկ է, - ասաց նա՝ տեսնելով Վհուկի Ոսկե գլխարկը, - հագնեմ գնամ Զմրուխտե քաղաք:

Այդպես էլ արեց:



ԴԱՇՏԱՄԿՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ

Դեղին աղյուսե ճանապարհն այլևս չկար, և Զմրուխտե քաղաք պետք է հասնեին ինքնուրույն՝ անցնելով վայրի ծաղիկների դաշտով: Զարմանալի չէ, որ շուտով մոլորվեցին, օրերով թափառեցին՝ քնելով բաց երկնքի տակ, հուսալով, որ ինչ-որ բան կօգնի իրենց ճանապարհը գտնելու: Մի օր, երբ անվերջ քայլելուց հոգնած՝ նստոտել էին խոտերի վրա, Դորոթին հարցրեց.

- Ի՞նչ եք կարծում, դաշտամկները գիտե՞ն Զմրուխտե քաղաքի ճանապարհը:

- Իհարկե կիմանան, - ասաց Խրտվիլակը, - բոլորովին մոռացել էինք նրանց:

Դորոթին հիշեց, որ դաշտամկների թագուհին իրեն մի փոքրիկ սուլիչ էր տվել, որ նեղն ընկած պահին կանչի նրան: Հենց սուլեց, լսվեց փոքրիկ թաթերի թփթփոց, և գորշ մկնիկները շրջապատեցին նրանց:

- Դուք գիտե՞ք Զմրուխտե քաղաք տանող ճանապարհը, - հարցրեց Դորոթին:

Մկների թագուհին մի քայլ առաջ եկավ.

- Զմրուխտե քաղաքն այստեղից շատ հեռու է, - ասաց նա: - Ոսկե գլխարկի օգնությամբ կանչե՛ք թևավոր կապիկներին, նրանք ձեզ արագ տեղ կհասցնեն:

Այստեղ Դորոթին հասկացավ, որ իր ունեցածը սովորական գեղեցիկ գլխարկ չէ. ի՛նչ լավ արեց, որ հետը վերցրեց: Թագուհի մկնիկը բացատրեց՝ ինչպես օգտագործել գլխարկը, և աղջիկը կանչեց թևավոր կապիկներին: Խոնարհաբար ողջունելով Դորոթիին՝ կապիկների թագավորը հարցրեց.

- Ի՞նչ կհրամայեք:

- Մենք մոլորվել ենք, - ասաց Դորոթին: - Օգնե՛ք մեզ Զմրուխտե քաղաք հասնել:

- Իսկույն, - պատասխանեց թագավորը:

Կապիկները զգուշորեն օդ բարձրացրին ճամփորդներին և, շատ չանցած, իջեցրին քաղաքի պարիսպների մոտ:

ՄԵԾՆ ՕԶԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Ճանապարհորդները երկար սպասեցին Օզի պալատի առջև: Ժամ առ ժամ նրանց համբերությունը հատնում էր: Վերջապես պահակը նրանց ներս ուղեկցեց: Սենյակը դատարկ էր թվում, բայց ինչ-որ տեղից լսվեց մի բամբ ձայն.

- Ես Մեծն սարսափելի Օզն եմ: Ինչո՞ւ եք փնտրում ինձ:

- Չար կախարդն այլևս չկա, - ասաց Դորոթին, - հիմա Դուք պետք է կատարեք Ձեր խոստումը:

- Ը՛ը՛մ..., վաղը եկեք, - ասաց ձայնը, և աղջկան թվաց, որ այս անգամ ձայնը մի քիչ անվստահ է հնչում:

- Մեզ երկար չսպասեցնեք, - մռնչաց առյուծը: Նրա ձայնից Տոտոն այնպես վախեցավ, որ մի կողմ թռչելով՝ շրջեց սենյակի անկյունում դրված միջնորմը... Միջնորմի հետևում կանգնած էր մի կարճլիկ ու ճաղատ մարդ:

- Դուք ո՞վ եք, - զարմացած ու հիասթափված հարցրեց Դորոթին:

- Ես Օզն եմ, Մեծն սարսափելի Օզը, - կմկմաց կարճլիկը, - բայց դուք կարող եք ինձ պարզապես Օզ անվանել: Ինչպես տեսնում եք, ոչ մի կախարդ էլ չեմ, այլ շատ սովորական մարդ:

- Ուրեմն այսքան ժամանակ մեզ խաբո՞ւմ էիք, - հարցրեց Դորոթին:

- Այո, - մի քիչ ամաչելով՝ ասաց մարդը: - Ժամանակին, երբ Օմահայում էի բնակվում՝ Նեբրասկայում, որ Կանզասին շատ մոտ է, ես իրոք կախարդ էի: Ես տարբեր ձեռնածություններ գիտեմ: Զմրուխտե քաղաքը բոլորվին էլ կանաչ չէ, այլ այդպիսին է երևում ակնոցների կանաչ ապակիների շնորհիվ:

- Իսկ ինչպե՞ս եք այստեղ եկել, - հարցրեց աղջիկը:

- Շատ էի սիրում օդապարիկով թռչել: Մի օր էլ այս կողմերում հայտնվեցի: Երբ այստեղի բնակիչները տեսան ինչպես եմ ամպերից վայր իջնում, որոշեցին, որ կախարդ եմ: Որպեսզի մի լավ զվարճանամ, և իմ բարի հպատակներն էլ անգործ չմնան, հրամայեցի՝ այս քաղաքը կառուցեն: Իսկ երբ տեսա, որ այն կանաչ է ու գեղեցիկ, անվանեցի Զմրուխտե քաղաք:

ՕԶԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Հաջորդ օրը Խրտվիլակն առաջինը գնաց Օզի հետ հանդիպման: Նա սրտանց ուզում էր մի քիչ խելք ունենալ:

- Ես ստիպված եմ գլուխդ մարմնիցդ անջատել, բայց հետո նորից տեղը կդնեմ, և այն առաջվանից ավելի լավը կլինի, - ասաց Օզը: Նա պոկեց Խրտվիլակի գլուխը, դատարկեց միջի հարդն ու տեղը թեփ լցրեց:

- Ահա քեզ հրաշալի՝ խելքով լի նոր գլուխ, - ասաց Օզը:

- Շատ շնորհակալ եմ, - ասաց Խրտվիլակը և դուրս վազեց, որ ընկերները տեսնեն, թե որքան խելոք է դարձել:

Հաջորդ օրը Փայտահատը գնաց Օզի մոտ՝ նոր սիրտ ստանալու: Օզն ինչ-որ դարակ բացեց և այնտեղից հանեց մի գեղեցիկ, թավշե սիրտ, որի մեջ թեփ էր լցված:

- Իսկ դա բարի՞ սիրտ է, - հարցրեց Փայտահատը:

Օզը հավատացրեց նրան, որ թավշե սիրտն անչափ բարի է: Փայտահատի կրծքին նա մի փոքրիկ անցք բացեց ու թավշե սիրտն այնտեղ ամրացրեց:

Երբ Առյուծի հերթը հասավ, Օզը բարձր դարակից վերցրեց մի կանաչ տափաշիշ, շշից ինչ-որ հեղուկ լցրեց թասի մեջ ու Առյուծին խնդրեց խմել:

- Ի՞նչ է դա, - հարցրեց Առյուծը:

- Այսպես ասեմ, եթե դա քո ներսում լիներ, կանվանեինք քաջություն: Իմացած լինես, բարեկամս, որ քաջությունը միշտ ներսից է գալիս:

Առյուծը խմեց ամբողջ հեղուկը և իսկույն իրեն քաջ զգաց:

Օզն ինքն իրենից շատ գոհ էր: Բոլորը հավատացել էին կախարդանքին: Նա գիտեր մարդկանց համոզել: Մնում էր մի հարց՝ ինչպե՞ս Դորոթիին տուն՝ Կանզաս հասցնել:



ՕԶԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է

Դորոթին երազում էր տուն վերադառնալ, բայց Օզին ժամանակ էր հարկավոր: Վերջապես նա կանչեց աղջկան:

- Ես մի ծրագիր ունեմ, - ասաց նա, - ես այստեղ եմ հայտնվել օդապարիկով: Վստահ եմ, որ օդապարիկով էլ կարող ենք հեռանալ քաղաքից: Օդապարիկ կարող ենք կարել մետաքսից, պալատում ինչքան ասես մետաքս կա: Օդապարիկը կլցնենք տաք օդով, և այն մեզ տուն կհասցնի:

- Մե՞զ, - զարմացավ Դորոթին, - մի՞թե Դուք էլ եք գալիս մեզ հետ:

- Այո, հոգնել եմ այս պալատում փակված մնալուց: Ոչ մի տեղ գնալ չեմ կարող: Եթե դուրս գամ, բոլորը կիմանան, որ կախարդ չեմ: Լավն այն է՝ հետդ Կանզաս գամ ու նորից կրկեսում աշխատեմ:

Ամբողջ երեք օր Դորոթին օգնում էր Օզին: Երբ օդապարիկը պատրաստ էր, կապեցին լվացքի մի մեծ կողովից: Օզը ժողովրդին հայտարարեց, որ ինքը պետք է գնա ամպերում ապրող իր եղբորն այցելության, և որ Դորոթին ուղեկցելու է իրեն:

- Իմ բացակայության ընթացքում ձեզ Խրտվիլակը կղեկավարի: Ենթարկվեք նրան, ինչպես ինձ: Իսկ հիմա, Դորոթի, մտի՛ր կողովը:

Տաք օդը օդապարիկը վեր էր մղում, բայց Դորոթին դեռ պատրաստ չէր մեկնելու: Տոտոն ինչ-որ կատվի էր հետապնդում, իսկ առանց շան աղջիկը երբեք տուն չէր գնա: Հանկարծ ճայթյուն լսվեց, օդապարիկը պահող պարանները պոկվեցին, և Օզը ճախրեց վեր՝ դեպի ամպերը: Դորոթին խեղճ-խեղճ նայեց հեռացող օդապարիկի հետևից: Մեծն Օզը մեկնեց առանց նրա:



ԴԵՊԻ ՀԱՐԱՎ

Հեռանալուց հետո Դորոթին սկսեց մտածել, թե ինչպե՞ս են վերադառնալու Կանզաս: Ոսկե գլխարկի օգնությամբ նա նորից կանչեց թևավոր կապիկներին, բայց այս անգամ կապիկները չկարողացան օգնել նրան:

Աղջիկը շվարել էր: Այդ ժամանակ պալատի զինվորը պատմեց նրան Հարավի բարի կախարդուհու՝ Գլինդայի մասին, որն իշխում էր Քվոդլինգների երկրում:

- Նա պետք է որ կարողանա քեզ օգնել, - ասաց զինվորը: Եվ Դորոթին ընկերների հետ ճանապարհ ընկավ դեպի Հարավ: Ճանապարհը երկար էր: Նրանք անցան մութ ու խիտ անտառով: Այնտեղ աճում էին սոսկալի ծառեր, որոնք ճյուղերը մեկնում էին, որ վնասեն ճանապարհորդներին: Հետո մագլցեցին բարձր ու ողորկ պարիսպը և հայտնվեցին մի երկրում, որտեղ գետինը ճերմակ էր ու սպասքի նման փայլուն, իսկ փոքրիկ բնակիչները ճենապակուց էին:

Մեկ այլ անտառում հանդիպեցին մեծ գազանների, որոնք ժողով էին գումարել և սաստիկ աղմկում էին: Առյուծին տեսնելով՝ գազանները ողջունեցին նրան:

- Դու ճիշտ ժամանակին եկար: Փրկիր մեզ թշնամուց, - ասացին նրանք:

Թշնամի ասածդ մի ահռելի սարդ էր, որ սողում էր անտառով՝ կուլ տալով պատահած գազաններին, բոլոր առյուծներին նա արդեն կուլ էր տվել: Մեր Առյուծն առանց վախենալու մոտեցավ քնած Սարդին ու թաթի հզոր հարվածով պոկեց նրա գլուխը:

- Կարող եք այլևս չվախենալ թշնամուց, - ասաց նա:

Գազանները խոնարհվեցին Առյուծի առաջ և նրան թագավոր հռչակեցին: Առյուծը խոստացավ Դորոթիին Կանզաս հասցնելուց հետո վերադառնալ և թագավորել անտառում:



ՄՈՒՐՃԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Անտառից դուրս գալով՝ ճամփորդները հասան մի Ժայռի, որը ստորոտից գագաթ ծածկված էր քարերով: Դեռ նոր էին սկսել բարձրանալ, երբ հայտնվեց մի մեծ, մուրճանման գլուխ և բղավեց.

- Ապա մի հե՛տ քաշվեք, սա մեր սարն է, և ոչ ոք իրավունք չունի այստեղով անցնելու:

- Ուզես թե չուզես, մենք այս սարն անցնելու ենք, - ասաց Խրտվիլակն ու առաջ գնաց:

Մուրճագլուխը կայծակի արագությամբ վրա հասավ ու այնպես հարվածեց Խրտվիլակին, որ խեղճը սարից ցած գլորվեց: Քրքջոց լսվեց, և քարերի հետևից հայտնվեցին հարյուրավոր մուրճագլուխներ: Առյուծը զայրացած առաջ վազեց, բայց մուրճագլուխներից մեկը նրան պարզապես հետ շպրտեց:

- Սրանց անկարելի է հաղթել, - ասաց նա:

- Բա ի՞նչ ենք անելու, - հարցրեց Դորոթին:

- Կանչենք թևավոր կապիկներին, - հիշեց Խրտվիլակը:

Դորոթին դրեց Ոսկե գլխարկն ու կանչեց կապիկներին:

Նրանք իսկույն հայտնվեցին և Դորոթիին ու ընկերներին արագ ու ապահով հասցրին Քվոդլինգների աշխարհ՝ հարուստ ու բախտավոր մի երկիր, ուր դաշտերում հասնում էր ցորենը, առվակները խոխոջում էին, իսկ տներն ու կամուրջները վառ կարմիր էին ներկված:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԼԻՆԴԱՅԻ ՀԵՏ

Մոտենալով մի տան՝ ճանապարհորդները թակեցին դուռը: Տանտիրուհին՝ կարճլիկ, գիրուկ, ոտից գլուխ կարմիր հագած մի կին, նրանց ներս հրավիրեց: Կինը բարեսիրտ ու ձեռնբաց էր, և Դորոթիին ու նրա ընկերներին մի լավ հյուրասիրելուց հետո բացատրեց՝ ինչպես հասնեն Գլինդայի դղյակը:

Գլինդան անմիջապես նկատեց օտարականներին: Գոհարապատ գահին նստած՝ նա իսկական գեղեցկուհի էր՝ ուսերին թափվող կարմիր վարսերով, կապույտ աչքերը՝ բարի-բարի:

- Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ, - հարցրեց նա Դորոթիին:

Աղջիկն ամեն ինչ պատմեց նրան:

- Աստված քեզ պահապան, փոքրի՛կս: Վստահ եմ, որ կկարողանամ օգնել քեզ տուն հասնել: Բայց նախ ինձ հանձնիր Ոսկե գլխարկը:

Դորոթին արդեն երեք անգամ օգտագործել էր Գլխարկը, այնպես որ ուրախությամբ տվեց այն Գլինդային, որը բարձրաձայն ասաց իր երեք ցանկությունները:

- Տարե՛ք Խրտվիլակին հետ՝ Զմրուխտե քաղաք, և թո՛ղ նա թագավորի այնտեղ, որովհետև իմաստուն է և արդար:

- Դու, Փայտահատ, վերադարձի՛ր Վինքիների երկիրն ու դարձի՛ր նրանց բարի թագավորը: Առյուծին տարե՛ք անտառ, որ դառնա գազանների արիասիրտ արքան:

- Իսկ Ոսկե գլխա՞րկը, - հարցրեց Դորոթին:

- Գլխարկը կտամ կապիկներին, - ասաց Գլինդան, - և նրանք ընդմիշտ ազատ կլինեն:

ԴՈՐՈԹԻԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ Է

Խրտվիլակի, Փայտահատի ու Առյուծի ցանկությունները կատարվել էին: Բայց Դորոթին դեռ շփոթված էր:

- Իսկ ես ինչպե՞ս եմ Կանզաս հասնելու, - հարցրեց նա:

- Արծաթե մաշիկներդ քեզ տուն կհասցնեն, - պատասխանեց Գլինդան, - եթե սկզբում իմանայիր, թե դրանք ինչ զորություն ունեն, այստեղ հայտնվելուդ հենց առաջին օրը տուն կվերադառնայիր:

- Բայց այդ ժամանակ ինձ ո՞վ խելք կտար, - վրդովվեց Խրտվիլակը:

- Ես էլ սիրտ չէի ունենա, - ասաց Փայտահատը:

- Իսկ ես այդպես վախկոտ էլ կմնայի, - ասաց Առյուծը:

- Իրավացի եք, - ասաց Դորոթին, - բայց հիմա, երբ ստացել եք սրտներիդ ուզածը, ժամանակն է, որ տուն վերադառնամ:

- Արծաթե մաշիկները կախարդական են, - ասաց Գլինդան, - նրանք կարող են երեք քայլից քեզ ուզածդ տեղը հասցնել: Պետք է ընդամենը երեք անգամ կրունկներդ իրար խփես և ասես՝ ուր ես ուզում գնալ:

Մեկնելուց առաջ Դորոթին ամուր գրկեց ու համբուրեց բոլորին: Ընկերները շատ տխրեցին, որ ստիպված են բաժանվել, բայց նաև ուրախ էին, որ իրենց երազանքներն իրականացել են: Գլինդան գահից իջավ և համբուրեց Դորոթիին: Աղջիկը գրկեց շանն ու ևս մեկ անգամ մնաս բարով ասելով՝ կրունկները երեք անգամ շեշտակի իրար խփեց:

ՎԵՐԱԴԱՐՁ ՏՈՒՆ

Ամեն ինչ այնքան արագ կատարվեց, որ Դորոթին միայն հասցրեց լսել, թե ինչպես է քամին սուլում ականջների մեջ: Արծաթե մաշիկներն ընդամենը երեք քայլ արեցին, իսկ հետո այնպես անսպասելի կանգ առան, որ աղջիկը գլորվեց խոտերին՝ չհասցնելով հասկանալ՝ որտեղ է: Վերջապես նա նստեց ու շուրջը նայեց:

- Աստված իմ, - բացականչեց նա:

Շուրջը վայրի տափաստանն էր: Հին տունը հողմը թռցրել տարել էր: Բայց փոխարենը մորաքրոջ ամուսինը, որ հիմա բակում կովերն էր կթում, նորն էր կառուցել: Տոտոն Դորոթիի գրկից ցած թռավ և ուրախ հաչելով՝ վազեց դեպի նա: Դորոթին ոտքի կանգնեց և վրայի փոշին թափ տվեց: Հենց այդ ժամանակ տնից դուրս եկավ մորաքույր էմը՝ ցնցուղը ձեռքին: Երբ նա քրոջ դստերը տեսավ, ձեռքից վայր գցեց ցնցուղն ու ձեռքերը լայն բացած՝ վազեց դեպի աղջիկը:

- Իմ անգի՛ն բալիկ, - բացականչեց նա՝ Դորոթիին ամուր գրկելով ու նրա դեմքը համբույրներով ծածկելով, - այս որտեղի՞ց հայտնվեցիր:

Դորոթիին թվաց՝ սիրտն ուրախությունից կպայթի:

- Օզի երկրից, մորաքույր, - հպարտ պատասխանեց աղջիկը, - և այնքան-այնքան ուրախ եմ, որ կրկին վերադարձել եմ տուն: